ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/08

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Աբովյանի համայնքապետարան

Բողոք բերող՝ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

Աբովյանի համայնքապետարան ներկայացուցիչ՝ Հ. Մկրտչյանի,

«Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի և ներկայացուցիչ՝ Հ. Մնացականյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, չափագրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 23.02.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերանայել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 19.02.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/2458-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 23.02.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

23.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/08 համարի ծածկագիրը:

04.03.2021թ.-ին և 12.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.03.2021թ.-ին:

2. «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ն 23.02.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Ա/Ձ Կարինե Համբարձումյանը մասնակցել է www.armeps.am համակարգի միջոցով անցկացված Աբովյանի համայնքապետարանի, որը ցանվում է ք. Աբովյան Բարեկամության հրապարակ 1 հասցեում, կողմից հրապարակված «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման գնման ընթացակարգին: Գնման ընդացակարգով գնման առարկա է հանգիսանում «Աբովյան համայնքի» կարիքների համար՝ «չափագրման ծառայությունների» ձեռբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն): Իմ կողմից գնման ընթացակարգի Հավելված 2 ձևաթղթի ծառայության անվանում սյունյակում լրացվել է գնման ընգացակարգի տեխնիկական բնութագրում նշված՝ բնակելի տարածքը մինչև 50քմ-մինչև 100 միավոր, բնակելի տարածը՝ 50քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածը՝ մինչև 100քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածը՝ 100-500քմ - մինչև 10

միավոր, ոչ բնակելի տարածը՝ 500-5000քմ մինչև 5 միավոր անվանումները, իսկ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ սյունյակում լրացվել է առանձին միավորների գները տառերով և թվերով: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իմ կողմից ուղղարկված հայտը գնահատել է անբավարար հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526 Ն որոման 32-րդ կետի 2 ենթակետը:

Սույն բողոքարկումով խնդրում եմ վերանայել մրցույթի գնահատման թիվ 2 արձանագրությունը, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի 526-Ն որոման 32-րդ կետի 2-րդ ենթակետով գրված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում, որտեղ չեն բառը վերաբերվում է միայն պահանջվում բառի և ներկայացվում բառին չեն բառը չի վերաբերվում, ուստի այն ներկայացմանը առգելող պահանջ առկա չի:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերանայել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

3. <u>Աբովյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.02.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2668-2021 գրությամբ դիմել է Աբովյանի համայնքապետարանը՝ հնարավորություն տալով «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 03.03.2021թ.-ի գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Հայտնում ենք այն մասին, որ Աբովյանի համայնքապետարանի կողմից 2021 թվականի փետրվարի 8-ին հայտարարվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, գնման առարկա է հանդիսացել Աբովյան համայնքի կարիքների համար չափագրման ծառայությունների ձեռքբերումը: Հայտերի բացման նիստը կայացել է 2021 թվականի փետրվարի 15-ին: Մրցույթին ունեցել ենք 6 մասնակից՝ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ն, «էյ էյ էս Ըքաունթինգ» ՍՊԸ-ն, «էքսպերտ» ՍՊԸ-ն, «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն, «Պոլիգոն» ՍՊԸ-ն և «ՍՏԵՓՐԻԿ» ՍՊԸ-ն: «էյ էյ էս Ըքաունթինգ» ՍՊԸ-ի, «էքսպերտ» ՍՊԸ-ի, «Պոլիգոն» ՍՊԸ-ի,«ՍՏԵՓՐԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջներին համապատասխան: «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի և «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի հայտերի մեջ գնային առաջարկները կազմվել են սխալներով, մասնավորապես՝ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի հայտի գնային առաջարկում գնման առարկայի անվանում չի լրացվել, ինչպես նաև գնային առաջարկում նշված ընդհանուր գինը գերազանցել է գնման հայտով սահմանված նախահաշվային գինը:

«Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում. Գնման առարկայի անվանումը լրացվել է սխալ, Մասնավորապես գնման առարկայի՝ «Ծառայության անվանումը» սյունակում պետք է լրացվեր «Աբովյան համայնքի կարիքների համար չափագրման ծառայություններ» սակայն մասնակցի կողմից լրացվել է «բնակելի տարածք՝ մինչև 50 քմ - մինչև 100 միավոր, բնակելի տարածք՝ 50 քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածք՝ մինչև 100 քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 100-500 քմ - մինչև 10 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 500 – 5000 քմ - մինչև 5 միավոր, 50 միավոր հողամասի չափագրման»: Գնային առաջարկի մեջ խախտվել է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ «Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում»: Մասնակիցը «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը, /տառերով և թվերով» սյունակում պետք է լրացներ մեկ թվով գումար, սակայն լրացվել է վեց տողով «800000 ութ հարյուր հազար ՀՀ դրամ 400000 չորս հարյուր հազար ՀՀ դրամ, 240000 երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ, 100000 մեկ հարյուր հազար ՀՀ դրամ, 2180000 երկու միլիոն ութսուն հարյուր հազար ՀՀ դրամ՝ 90000 իննսուն հազար ՀՀ դրամ, 550000 հինգ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ»:

Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելու հիմքով պայմանավորված՝ որոշել է մերժել «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի և «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերը: ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06 ծածկագրով գնման Ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից) ճանաչել «էյ էյ էս Ըքաուեթինգ» ՍՊԸ-ին, որպես բավարար բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, և ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.02.2021թ.-ին հայտարարվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 15.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում սխալ է լրացվել գնման առարկայի անվանումը, մասնավորապես՝ գնման առարկայի «Ծառայության անվանումը» սյունակում պետք է լրացվեր «Աբովյան համայնքի կարիքների համար չափագրման ծառայություններ» սակայն մասնակցի կողմից լրացվել է «բնակելի տարածք՝ մինչև 50 քմ - մինչև 100 միավոր, բնակելի տարածք՝ 50 քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածք՝ մինչև 100 քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 100-500 քմ - մինչև 10 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 500 – 5000 քմ - մինչև 5 միավոր, 50 միավոր հողամասի չափագրման»: Գնային առաջարկի մեջ խախտվել է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ «Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում»: Մասնակիցը «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը, /տառերով և թվերով» սյունակում պետք է լրացներ մեկ թվով գումար, սակայն լրացվել է վեց տողով «800000 ութ հարյուր հազար ՀՀ դրամ 400000 չորս հարյուր հազար ՀՀ դրամ, 240000 երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ, 100000 մեկ հարյուր հազար ՀՀ դրամ, 2180000 երկու միլիոն ութսուն հարյուր հազար ՀՀ դրամ՝ 90000 իննսուն հազար ՀՀ դրամ, 550000 հինգ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ»:

iv. Նույն արձանագրության 3.3 կետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար, իսկ 5.1 կետով՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է վերջինիս հայտը մերժել:

v. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկով, սահմանվել է՝ «չափաբաժնի համարը», «Ծառայության անվանումը», «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

vi. «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկով, չափաբաժնի համարը նշվել է՝ 1, ծառայության անվանումը՝ բնակելի տարածք՝ մինչև 50 քմ - մինչև 100 միավոր, բնակելի տարածք՝ 50 քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածք՝ մինչև 100 քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 100-500 քմ - մինչև 10 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 500 – 5000 քմ - մինչև 5 միավոր, 50 միավոր հողամասի չափագրման, արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ նշել է՝ 800 000 ՀՀ դրամ, 400 000 ՀՀ դրամ, 240 000 ՀՀ դրամ, 100 000 Հ դրամ, 90 000 ՀՀ դրամ, 550 000 ՀՀ դրամ, ԱԱՀ** /տառերով և թվերով/՝ չի նշվել, ընդհանուր գինը /տառերով և թվերով/ նշվել է՝ 2 180 000 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի

բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են

անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա ներկայացված հայտերը հանձնաժողովի կողմից մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Աբովյանի համայնքապետարանի կողմից չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.02.2021թ.-ին հայտարարված «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետով արձանագրվել է, որ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում սխալ է լրացվել գնման առարկայի անվանումը, մասնավորապես՝ գնման առարկայի «Ծառայության անվանումը» սյունակում պետք է լրացվեր «Աբովյան համայնքի կարիքների համար չափագրման ծառայություններ» սակայն մասնակցի կողմից լրացվել է «բնակելի տարածք՝ մինչև 50 քմ - մինչև 100 միավոր, բնակելի տարածք՝ 50 քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածք՝ մինչև 100 քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 100-500 քմ - մինչև 10 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 500 – 5000 քմ - մինչև 5 միավոր, 50 միավոր հողամասի չափագրման»: Գնային առաջարկի մեջ խախտվել է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ «Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում»: Մասնակիցը «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը, /տառերով և թվերով» սյունակում պետք է լրացներ մեկ թվով գումար, սակայն լրացվել է վեց տողով «800000 ութ հարյուր հազար ՀՀ դրամ 400000 չորս հարյուր հազար ՀՀ դրամ, 240000 երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ, 100000 մեկ հարյուր հազար ՀՀ դրամ, 2180000 երկու միլիոն ութսուն հարյուր հազար ՀՀ դրամ՝ 90000 իններսուն հազար ՀՀ դրամ, 550000 հինգ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ»: Նույն արձանագրության 3.3 կետով՝ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար, իսկ 5.1 կետով՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է վերջինիս հայտը մերժել:

«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկով, սահմանվել է՝ «չափաբաժնի համարը», «Ծառայության անվանումը», «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

«Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկով, չափաբաժնի համարը նշվել է՝ 1, ծառայության անվանումը՝ բնակելի տարածք՝ մինչև 50 քմ - մինչև 100 միավոր, բնակելի տարածք՝ 50 քմ և ավելի - մինչև 50 միավոր, ոչ բնակելի տարածք՝ մինչև 100 քմ - մինչև 30 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 100-500 քմ - մինչև 10 միավոր, ոչ բնակելի տարածք՝ 500 – 5000 քմ - մինչև 5 միավոր, 50 միավոր հողամասի չափագրման, արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ նշել է՝ 800 000 ՀՀ դրամ, 400 000 ՀՀ դրամ, 240 000 ՀՀ դրամ, 100 000 Հ դրամ, 90 000 ՀՀ դրամ, 550 000 ՀՀ դրամ, ԱԱՀ** /տառերով և թվերով/՝ չի նշվել, ընդհանուր գինը /տառերով և թվերով/ նշվել է՝ 2 180 000 ՀՀ դրամ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-06» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկում սխալ է նշվել գնման առարկայի անվանումը, որն էլ, ըստ Հրավերի պահանջի, ենթակա էր նշման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, ուստի և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կարինե Համբարձումյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/08 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ